ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱ-09.06.01.86-18

15 դեկտեմբեր 2021թ

ք. Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի քարտուղար Դ. Համբարյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և «Երևանի Մուրացանի անվան հ.18 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն _Ա.Ավետիսյամի_, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն պարտավորվում է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 09.06.01.«86. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստում» միջոցառման իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կատարողին, իսկ Կատարողը ստանձնում պարտավորություն 2021 թվականի ընթացքում իրականացնել հերթական ատեստավորման ենթակա թվով 5 ուսուցչի վերապատրաստում (այսուհետև՝ Ծառայություն):

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով կատարված Ծառայության ընդհանուր գինը կազմում է 120 000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն համաձայն Կատարողի կողմից ներկայացված հայտի կատարում է վճարում անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.Պատվիրատուն ցանկացած ժամանակ իրավունք ունի ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.2. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.4. Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.5. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.6. Կատարողի կողմից ստացված և սահմանված ժամկետներում չօգտագործված միջոցները վերադարձվում է Պատվիրատուին:

3.7. Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.8 Կատարողը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով և միջոցառմամբ նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պատվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն պայմանագրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
Երևանի քաղաքապետարան	«Երևանի Մուրացանի անվան հ.18 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Արգիշտի 1	ք. Երևան, Բագրատունյաց 32
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038198	Հ/Հ 900018004334
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 02213566
Աշխատակազմի քարտուղար	Տնօրեն
..... Դ. Հայրապետյան	..... Ա.Ավետիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.տ	Կ.տ